

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»
Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

2022թ.

Վերին ու Ներքին Շորժա գյուղերում քաղաքացիական բնակչություն չկա առհասարակ, դարձել են լքված գյուղեր

Գեղարքունիքում ադրբեջանական հանցավոր արաքների հետևանքով առաջացել են լքված գյուղեր, խմելու ջրի հասանելիության լրջագույն խնդիրներ կամ չկա առհասարակ, խաթարված է մարդկանց անվտանգությունը: Այս մասին հայտարարություն է տարածել ՀՀ նախկին ՄԻՊ, «Թաթոյան» հիմնադրամի հիմնադիր Արման Թաթոյանը:

Հայտարարությունում նաեւ ասվում է. «2022թ. դեկտեմբերի 29-ին Երավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի ներկայացուցիչներն այցելել են Գեղարքունիքի մարզ՝ փաստագրելու համար ՀՀ-ի նկատմամբ 2022 թ. սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական զինված հարձակումների ու առաջխաղացումների հետևանքով խաղաղ բնակիչներին պատճառված վնասները:

Կուտակյան, Վերին Շորժա, Փոքր Մասրիկ, Արփունք, Արեգունի, Սոթք և մյուս գյուղերի հետ կապված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2020 թ. մայիսյան ներխուժումներից հետո ստեղծված իրավիճակն էլ ավելի է խորացել 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի՝ պայմանավորված ադրբեջանական զինված առաջխաղացումներով: Տասնյակ գյուղեր, բազմաթիվ բնակելի տներ, հայտնվել են ադրբեջանական ուղիղ դիտարկման ներքո, հազարավոր հեկտարների արոտավայրեր, խոտհարքներ, վարելահողեր ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության կամ դիտարկման ներքո են: Դրանք պարզապես չի լինում օգտագործել:

Ընդ որում, այս հողատարածքների նկատմամբ մարդիկ ունեն սեփականության օրինական իրավունք: Օրինակ՝ Վերին ու Ներքին Շորժա գյուղերում քաղաքացիական բնակչություն չկա առհասարակ, դարձել են լքված գյուղեր: Գեղամաբակ, Զաղացաձոր, Այրք, Վերին Շորժա, Ներքին Շորժա և այլ գյուղերի համար ջրային ավազաններն ու ջրի բնական աղբյուրները հայտնվել են ադրբեջանական վերահսկողության կամ դիտարկման ներքո 2021թ. մայիսից ու առավել խորացել 2022թ. սեպտեմբերի պատերազմից հետո. գյուղերում ջրի հասանելիության լուրջ խնդիրներ են առաջ եկել կամ չկա հասանելիություն առհասարակ:

Բնակիչների, համայնքային մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումները ցույց են տալիս, որ գյուղերից լքվում են ադրբեջանական կրակոցների ձայները, որոնք մարդկանց ահաբեկելու նպատակ ունեն: Սոցիալական առկա խնդիրները խորացել են, ավելացել են կյանքի ու անվտանգության սպառնալիքները: Նորից եմ կրկնում, որ մեր առաջնային նպատակը պետք է լինի ադրբեջանական զինված ծառայողներին հեռացնելը ոչ միայն մեր օկուպացված տարաքներից, այլ նաև 2020 թվականի պատերազմից հետո մեր գյուղերի ու ճանապարհների մոտ նրանց հանցավոր տեղայնացումներից:

Արձանագրած փաստերը՝ կապված ՀՀ ինքինչխան տարածք ադրբեջանական հանցավոր ներխուժումներով, ՀՀ գյուղերի հարևանությամբ և համայնքների միջև ճանապարհների ադրբեջանական անօրինական զինված տեղակայումներով երկրի անվտանգության, բնակչության կյանքի համար առաջացրած խորքային խնդիրների հետ, կվերլուծվեն և կներկայացվեն համապատասխան կառույցներին: Ներկայում կազմվում է անզլերենով զեկույց այս հարցերի առնչությամբ՝ հատուկ մեթոդաբանությամբ:

<https://www.24news.am/news/265783>

29.12.2022

Չինժառայողների մարմինները դուրս բերել չի հաջողվում ադրբեջանական կողմի խոչընդոտների պատճառով. Արման Թաթոյան

Այսօր այցելել եմք Գեղարքունիքի, Արագածոտնի ու Արմավիրի մարզեր՝ Ադրբեջանի սանձազերծած 2022թ. սեպտեմբերի 13-14-ի, 2020թ. 44-օրյա պատերազմների ընթացքում զոհված, անհայտ կորած զինժառայողների ընտանիքներին, այդ թվում՝ զոհված կին զինժառայողի ընտանիքին: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ նախկին ՄԻՊ, «Թաթոյան» հիմնադրամի տնօրեն Արման Թաթոյանը:

«Եղել եմք Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, Արեգունի, Փոքր Մասրիկ, Արփունք գյուղերում, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Բազմադրյուր, Սասունիկ, Գիտավան բնակավայրերում, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում, քննարկել եմք մարդկանց խնդիրները, որոնք էլ ավելի են խորացել պատերազմի հետևանքով:

Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ 2022թ. սեպտեմբերի 13-14-ի Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով կան ՀՀ զոհված զինժառայողների մարմիններ, որոնք ՀՀ ինքնիշխան տարածքի այն հատվածներում են, որտեղ նեխուժել են ադրբեջանական զինված ուժերը և գտնվում են նրանց վերահսկողության ներքո: Չինժառայողների մարմինները դուրս բերել չի հաջողվում ադրբեջանական կողմի խոչընդոտների պատճառով: Այս հանգամանքը, բնականաբար, ավելի մեծ ցավ ու տառապանք է պատճառում ընտանիքներին: Սա ադրբեջանական իշխանությունները հատուկ են անում և դա կազմում է տարիների հայատյաց քաղաքականության մասը, որ կիրառում են բոլոր ոլորտներում:

Տեղում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծման կամ դրանց նպաստելու ուղղությամբ հիմնադրամը քայլեր կձեռնարկի, ըստ անհրաժեշտության տրվել են իրավաբանական խորհրդատվություն և ուղղորդումներ:

Հ. Գ. Ընտանիքների համար Fortuna Home & Country House խանութ սրահը համագործակցության շրջանակում տրամադրել էր որոշակի իրեր, որոնք այցերի ընթացքում փոխանցվել են նրանց», - գրել է նա:

<https://yerkir.am/hy/article/2022/12/29/5336>

29.12.2022

Երևանում, Արարատի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում կկառուցվի ֆուտբոլի 4 դպրոց

Կառավարությունն իր այսօրվա՝ դեկտեմբերի 29-ի նիստում որոշեց ԿԳՄՄ նախարարության 2022-ի բյուջեն ավելացնել 2,5 մլրդ դրամով՝ ՀՀ-ում ֆուտբոլի ենթակառուցվածքների զարգացման ծրագրին պետական աջակցություն տրամադրելու նպատակով:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի անհրաժեշտությունն էլնում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից 2023-2024 թվականների ընթացքում Հայաստանի երեք մարզերում և Երևանում ֆուտբոլի դպրոցների կառուցման» ծրագրից:

Հայաստանում ֆուտբոլի ենթակառուցվածքների զարգացման նպատակով նախատեսվում է Երևան քաղաքում, ՀՀ Արարատի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում կառուցել թվով 4

Ֆուտբոլի դպրոց՝ արհեստական կամ բնական խաղադաշտերով, անհրաժեշտ հարակից շինություններով, փակ մարզադահլիճներով:

Երևան քաղաքում ֆուտբոլի դպրոցի կառուցման համար ընտրվել է Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/10 հասցեում գտնվող ընդհանուր 4 հա մակերեսով հողատարածքը՝ հաշվի առնելով նմանատիպ մարզադպրոցի բացակայությունը ինչպես Դավիթաշեն, այնպես էլ հարակից՝ Աջափնյակ և Արաբկիր համայնքներում: Նախնական հաշվարկով՝ ենթաձրագրի արժեքը կկազմի 1.6 մլրդ ՀՀ դրամ (ներառյալ ՆՆՓ-երի արժեքը):

ՀՀ Արարատի մարզում ֆուտբոլի դպրոցի կառուցման համար ընտրվել է Արտաշատ քաղաքի համայնքային սեփականություն համարվող հողակտորը (մոտ 1,7 հա): Նախնական հաշվարկով՝ ենթաձրագրի արժեքը կկազմի 800.0 մլն ՀՀ դրամ:

ՀՀ Գեղարքունիքի մարզում ֆուտբոլի դպրոցի կառուցման համար ընտրվել է Մարտունի քաղաքի նախկին մարզադաշտի տարածքը (մոտ 4 հա), որն արդեն իսկ այս նպատակի իրագործման համար սեփականատիրոջից գնվել է Մարտունի համայնքի ավագանու կողմից:

Առկա է նաև պայմանավորվածություն Հայաստանի առաջատար ակումբներից Ալաշկերտ ՖԱ-ի հետ առ այն, որ Մարտունիում մարզադպրոց-մարզադաշտի կառուցումից հետո ակումբը տեղափոխվելու է Մարտունի և հանդես է գալու տեղի մարզադաշտում: Նախնական հաշվարկով՝ ենթաձրագրի արժեքը կկազմի 1.2 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ Տավուշի մարզում ֆուտբոլի դպրոցի կառուցման համար ընտրվել է ընտրվել է Իջևան քաղաքի Արնար մարզադաշտի տարածքը (մոտ 2,1 հա): Նախնական հաշվարկով՝ ենթաձրագրի արժեքը կկազմի 1.4 մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր, ծրագրի նախնական արժեքը կազմում է 5.0 մլրդ ՀՀ դրամ, սակայն ներկայիս Նախագծով որպես աջակցություն ՀՖՖ-ին հատկացվում է միայն 50%-ը՝ 2.5 մլրդ ՀՀ դրամը, իսկ մնացած գումարի մասով անհրաժեշտության և հնարավորության դեպքում անդրադարձ կկատարվի 2023թ.-ին:

<https://news.am/arm/news/737526.html>

27.12.2022

Կառավարությունը 29 886 500 դրամ գումար է հատկացրել Վարդենիսի 17 անասնապահական տնտեսություններին

Կառավարության համապատասխան որոշմամբ 29 886 500 դրամ գումար է հատկացվել Վարդենիսի 17 անասնապահական տնտեսություններին՝ ադրբեջանական ագրեսիաների հետևանքով հասցված վնասները վերականգնելու համար: Այս մասին տեղեկացրել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Տնտեսություններին աջակցելու գումարը տրամադրելու գործընթացը կազմակերպելու նպատակով մարզպետարանում ընդունեցի Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանին և Վարդենիս համայնքի անասնապահական տնտեսությունների ներկայացուցիչներին:

ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել աջակցել 2021-2022 թվականների ընթացքում աղբբեջանական ագրեսիաների հետևանքով տուժած տնտեսություններին՝ հիմք ընդունելով Վարդենիսի համայնքապետարանի և Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ներկայացված տվյալները և առաջարկությունները:

Գործընթացն արագ կազմակերպելու համար առաջիկա երեք օրվա ընթացքում պետք է ներկայացնել վճարման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: Պայմանավորվածություն ենք ձեռք բերել, որ համապատասխան գումարները ստանալուց հետո դրանց առնվազն 80 %-ը պետք է ծախսվի բացառապես անասնազլխաքանակ ձեռք բերելու և տնտեսությունների վերականգնման ուղղությամբ:

Կառավարությունը հոգացել է ամեն բան, որպեսզի տնտեսությունները վերականգնեն կորսված անասնազլխաքանակը և զարգանան:

Հունվարի երրորդ տասնօրյակում մարզպետարանի կողմից կանցկացվի համապատասխան ուսումնասիրություն՝ տրամադրված գումարները նպատակային ծախսելու ուղղությամբ:

Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը անասնապահական տնտեսությունների անունից հավաստիացրեց, որ տրամադրված գումարները կծախսվեն նպատակային, կվերականգնվի կորսված անասնազլխաքանակը, իսկ շահառու տնտեսությունները զարկ կտան անասնապահության զարգացմանը»,- գրել է մարզպետը Ֆեյսբուքյան իր էջում:

<https://news.am/arm/news/737337.html>

23.12.2022

Վերին Շորժայի ուղղությամբ աղբբեջանական ԶՈՒ կրակոցները դադարել են լուսադեմին

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վերին Շորժա բնակավայրի ուղղությամբ աղբբեջանական զինված ուժերի կրակոցները տեւել են մոտ 2-3 ժամ, լուսադեմին են դադարել: Այս մասին [24News](#)-ին ասաց բնակավայրի վարչական ղեկավար Արտյոմ Երանոսյանը:

Երանոսյանի խոսքերով, կրակոցները եղել են դիրքերի ուղղությամբ, սակայն բնակավայրում բարձ լսվել են ձայները:

Ավելի վաղ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ դեկտեմբերի 23-ի ժամը 03:15-ի սահմաններում Աղբբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել Վերին Շորժայի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ. «Հակառակորդը կիրառել է նաև ականանետ: Հայկական կողմը կորուստներ չունի:

Դեկտեմբերի 23-ի՝ ժամը 08:30-ի դրությամբ, իրադրությունն առաջնագծում հարաբերականորեն կայուն է»: Վերին Շորժայի ղեկավարն ասաց, որ բնակչությունը խուճապահար չէ. «Մարդիկ արդեն սովորել են կրակոցներին»:

Մերգեյ Առաքելյան

<https://www.24news.am/news/264828>

20.12.2022

Կուտականի ուղղությամբ ադրբեջանական կրակոցներից գյուղը վնասներ չի կրել

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կուտականի դիրքերի ուղղությամբ ադրբեջանական կրակոցներից գյուղում վնասներ չեն եղել, չնայած կրակոցները լսվել են: Այս մասին **24News**-ին ասաց բնակավայրի ղեկավար Մակիչ Թովմասյանը:

Վարչական ղեկավարը հավելեց նաև, որ չգիտի՝ որքան են տեւել կրակոցները: «ՊՆ-ից ճշտեք», - եզրափակեց էր խոսքը Թովմասյանը:

Ավելի վաղ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ դեկտեմբերի 20-ին՝ ժամը 00:05-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել Կուտականի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

«Հայկական կողմը կորուստներ չունի:

Դեկտեմբերի 20-ի՝ ժամը 09:00-ի դրությամբ, իրադրությունն առաջնագծում հարաբերականորեն կայուն է», - եզրափակված էր ռազմական գերատեսչության հաղորդագրության մեջ:

<https://www.24news.am/news/264292>

19.12.2022

«Այն, ինչ կատարվում է Բերձորի միջանցքում, եթե հակահարված չլինի, սցենարը տեղափոխվելու է Սյունիք ու Գեղարքունիք». Կովկասագետ

Արցախի միակ ճանապարհը՝ Բերձորի միջանցքը, բնապահպանական պատրվակներով փակած Ադրբեջանն արդեն 8 օր է չի բացում: **Արցախի Հանրապետության Մեսրոպ Մաշտոց համալսարանի Կովկասագիտության կենտրոնի ղեկավար, կովկասագետ Յուրի Ավանեսովի** խոսքով՝ Ադրբեջանին պատրվակներ են պետք, որպեսզի իրավիճակը սրի ու Արցախը պահի շրջափակման մեջ:

«Հստակորեն մենք պետք է արձանագրենք, որ գործ ունենք ոչ թե բնապահպանների հետ, այլ Ադրբեջանի և Թուրքիայի հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ, առկա բոլոր լուսանկարները և տեսանյութերը դրա մասին են փաստում: Այդ հատուկ ծառայություններից բացի, ներգրավված է նաև «Գորշ գայլեր» ահաբեկչական խմբավորումը:

Այս ամենի վերաբերյալ միջազգային արձագանքն ու հնչեցրած հայտարարությունները զուտ արարողակարգային բնույթ են կրում՝ ուղղակի դատապարտելով ու կոչ անելով Ադրբեջանին բացելու Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը: Նման արարողակարգային հայտարարությունները որևէ էական ազդեցություն չեն ունենում ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ, առավել ևս, Թուրքիայի վրա:

Հստակորեն պետք է ասենք, որ Ադրբեջանը միայն մեկ լեզու է հասկանում՝ ուժի լեզուն: Միայն Ադրբեջանի նկատմամբ հստակ պատժամիջոցներ կիրառելով, այդ թվում՝ ուժային միջոցով, հնարավոր կլինի խնդիրը լուծել», - նշեց Յուրի Ավանեսովը:

Ինչ վերաբերում է ստեղծված իրավիճակում ռուս խաղաղապահների դերակատարությանը, Յուրի Կվանտսովը նկատեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչ այժմ միջազգայնորեն հաստատված չէ նրանց մանդատը, նրանք միայն կարողանում են անել այն, որ թույլ չեն տալիս ադրբեջանցիներին իրենց փակած ճանապարհի հատվածից առաջ գնալ:

«Այս փուլում Ադրբեջանի գործողություններն ուղղված են և՛ Արցախի, և՛ ռուս խաղաղապահների դեմ: Ադրբեջանի պետական պաշտոնյաները տարբեր հարթակներում հայտարարում են, թե իբր Բերձորի միջանցքը փակել է ոչ թե Ադրբեջանը, այլ ռուս խաղաղապահները: Նրանք մշտապես հայտարարում են, որ ամեն ինչ անելու են, որպեսզի ռուս խաղաղապահները դուրս գան Արցախից սահմանված ժամկետից շուտ: Բոլոր այս գործողությունները, որոնց մենք ականատես ենք լինում ոչ միայն ճանապարհի փակումը, այլև այս տարվա մարտին տեղի ունեցած իրադարձությունները, գազատարի պայթեցումը, Փառուխի, Խրամորթի դեպքերը, Խնապատի դպրոցի թիրախավորումը, այս ամենը ուղղված է՝ ինչպես Արցախի, այնպես էլ՝ ռուս խաղաղապահների դեմ: Սա՝ կարճաժամկետ կտրվածքով, եթե խնդրին նայում ենք երկարաժամկետ կտրվածքով, ապա այս ամենը սպառնալիք է Հայաստանի համար: Այն, ինչ կատարվում է Բերձորի միջանցքում, եթե հակահարված չլինի, սցենարը տեղեփոխվելու է Սյունիք ու Գեղարքունիք: Հիշեցնեմ, որ Ադրբեջանը քարոզչական նախապատրաստական աշխատանքները վաղուց է սկսել, հայտարարելով, թե իբր Գեղարքունիքում հանքավայրերի օգտագործումը առաջացնում է բնապահպանական խնդիրներ: Պետք է նաև արձանագրենք մեկ կարևոր հանգամանք, որ այս ֆոնին բավականին մեծ է ռազմական Եսկալացիայի սկսումը՝ ինչպես Արցախի, այնպես էլ՝ Հայաստանի սահմանին», - շեշտեց կովկասագետը:

Շարունակելով միտքը, Յուրի Կվանտսովն ասաց, որ Ադրբեջանը նման ճանապարհով ևս մեկ նպատակ է հետապնդում՝ ադրբեջանական օրակարգով ու պահանջներով պարտադրել ստորագրել «խաղաղության պայմանագիրը», որը, կովկասագետի կարծիքով՝ ոչ թե խաղաղություն է ենթադրում, այլ Հայաստանի շրջափակում: Նման քայլերով Ադրբեջանը նաև ուզում է հասնել «Չանգեզուրյան միջանցքի» հաստատմանը, որի մասին Ադրբեջանը պարբերաբար հայտարարում է, նաև առաջ քաշելով «Չանգեզուրի ինքնավար հանրապետություն» թեզը:

«Մենք պետք է բարձրաձայնենք ու խոսենք 1990-ականներից մինչև այժմ Ադրբեջանի կողմից իրականացվող ադրբեջանական հանցագործությունների մասին, դրանք հազարներն են: 90-ականներին նրանք վառում էին մեր անտառները, օգտագործելով նաև արգելված զինատեսակներ, բազմաթիվ դեպքերում թունավորել են նաև ջուրը, 2020 թվականին էլ սպիտակ ֆոսֆոր օգտագործեցին, որն արգելված է միջազգային կոնվենցիաներով: 2022 թվականին Ադրբեջանը, երբ հարձակվեց Հայաստանի վրա, թիրախավորել էին նաև Կեչուտի ջրամբարը», - եզրափակեց Յուրի Կվանտսովը:

<https://168.am/2022/12/19/1812334.html>

17.12.2022

Կալանավորվել է Հայաստանի ՁՈՒ հետախուզության նախկին պետը

Հարությունյանը ձերբակալվել է մի քրեական գործի շրջանակում, որի մասին հաղորդվել էր դեռ դեկտեմբերի 14-ին:

Ձերբակալվել է երկրորդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, ՀՀ ՁՈՒ հետախուզության նախկին պետ, գեներալ-մայոր Արայիկ Հարությունյանը: Այս մասին [Sputnik Արմենիային](#) հայտնի է դարձել սեփական աղբյուրներից:

Հարությունյանը կալանավորվել է մի քրեական գործի շրջանակում, որի մասին հաղորդվել էր դեռ դեկտեմբերի 14-ին:

Մեղադրյալի անունը հաղորդագրության մեջ այն ժամանակ նշված չէր:

Sputnik Արմենիային, սակայն, հաջողվել է պարզել, որ խոսքը հենց Հարությունյանի մասին է:

2021 թվականի մայիսին Գեղարքունիքի մարզի Կույթ և Վերին Շորժա գյուղերի մոտ ադրբեջանական զինված ուժերի ներթափանցման ժամանակ Հարությունյանը ղեկավարել է 2 կորպուս, և նշված ուղղությունները եղել են գորամիավորման պատասխանատվության գոտում:

Դրանից հետո Հարությունյանը նշանակվել էր հետախուզության վարչության պետ, սակայն հետո նրան ազատեցին այդ պաշտոնից:

Հավելենք, որ գործը հսկող դատախազի որոշմամբ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին Ա.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում):

<https://yerkir.am/hy/article/2022/12/17/4698>

15.12.2022

Վարդենիսում ամանորյա զարդարանք ու տոնաձառ չի լինի

Վարդենիսում ամանորյա զարդարանք ու տոնաձառ այս տարի չեն լինի: Այս մասին հայտարարություն է տարածել Վարդենիսի համայնքապետարանը:

«Միրելի՛ վարդենիսցիներ, բոլորիս հիշողություններում դեռ թարմ է Ադրբեջանի կողմից սանձազերված սեպտեմբերյան ագրեսիան:

Վարդենիս համայնքը ագրեսիայից ամենաշատ վնաս կրած համայնքներից է: Մենք չենք մոռացել հանուն հայրենիքի հերոսաբար ընկած մեր արի տղաներին, իրենց կորստի ցավը մեր սրտերում է: Այս ցավալի հանգամանքները հաշվի առնելով՝ Վարդենիսի համայնքապետարանը որոշում է կայացրել. Վարդենիս համայնքում ամանորյա ավանդական զարդարանք այս տարի չանել: Միրելի՛ վարդենիսցիներ, հուսով ենք՝ ըմբռնումով կմոտենաք, իսկ մեր երեխաների համար կկազմակերպվեն ամանորյա հետաքրքիր միջոցառումներ»:

Նշենք, որ նախորդ տարիներին Վարդենիս համայնքը գեղեցիկ ու շքեղ զարդարանքներ էր անում համայնքի բնակիչների համար:

<https://yerevan24.am/news/2022-12-15-vardenisum-amanorya-zardaranq-u-tonatsar-chi-lini>

14.12.2022

Հրամանատարի անգործության հետևանքով չի կանխվել Ադրբեջանի ԶՈՒ-ի՝ մայիսի 12-ի հարձակումը. մանրամասներ

ՀՀ ՊՆ N գորամասի հրամանատար Ա. Յ.-ն, ունենալով մարտական հերթապահության վերաբերյալ ժամանակին որոշումներ ընդունելու, ենթականերին առաջադրանքներ տալու և դրանց կատարումը վերահսկելու, պետական սահմանի, շփման գծի խախտումները կանխելու, ինչպես նաև՝ հակառակորդի հանկարծակի հարձակման հնարավորությունը բացառելու և կասեցնելու պարտավորություն, 2021 թվականի ապրիլի 15-ին, տեղեկանալով, որ իր կողմից դեռևս 2021 թվականի ապրիլի 5-ին արձակված հրամանի պահանջները չեն կատարվել, որևէ միջոց չի ձեռնարկել հրամանի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ, հայտնում է դատախազության հանրային կապերի բաժինը:

Արդյունքում ՀՀ զինված ուժերը զրկվել են Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու հնարավորությունից՝ առաջացնելով ծանր հետևանք. 2021 թվականի մայիսի 12-ին Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները ՀՀ պետական սահմանի Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա, Կուբ բնակավայրերին և Նորաբակ համայնքին հարող շփման գծի այն հատվածներով, որտեղ գորամասի հրամանատարի անգործության հետևանքով սահմանված չի եղել մարտական հերթապահություն, անարգել հատել և մխրճվել են ՀՀ պետական սահմանից ներս, տեղակայել մարտական դիրքեր՝ վերահսկողություն սահմանելով ՀՀ սուվերեն տարածքի նկատմամբ:

Հսկող դատախազի որոշմամբ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին Ա. Յ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում):

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

<https://www.24news.am/index.php/news/263597>

14.12.2022

Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցում կկազմակերպվի չինարեն լեզվի ուսուցման գործընթացը

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Ֆան Յոնգն այցելել է Գեղարքունիքի մարզ: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից, Ֆան Յոնգին ընդունել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը: Հանդիպմանը մասնակցել են նաև Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն մարտիրոսյանը, Չինաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, ռազմական կցորդը, այլ պաշտոնյաներ:

Գեղարքունիքի մարզպետը դեսպանին ներկայացրել է Գեղարքունիքի մարզի մասին պատմական համառոտ ակնարկ, ՀՀ Կառավարության աջակցությամբ մարզում իրականացվող բազմոլորտ ներդրումային ծրագրերը, մարզի տնտեսության ներուժը, ադրբեջանական վերջին ագրեսիայի հետեւանքով մարզի սահմանային բնակավայրերում ստեղծված իրավիճակը:

«Այս տարի լրացավ Հայաստանի Հանրապետության եւ Չինաստանի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը, ինչի համար շնորհավորում եմ բոլորիս, չնայած որ հայ-չինական հարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն:

Այս տարիների ընթացքում հայ-չինական համագործակցությունը կայուն զարգացում է ապրել, եւ ես շատ կցանկանամ, որ ապակենտրոնացված համագործակցություն ստեղծվի Գեղարքունիքի մարզի եւ Չինաստանի Հանրապետության որեւէ մարզի կամ քաղաքի միջեւ:

Գեղարքունիքի մարզպետարանը պատրաստակամ է՝ այդ համագործակցության համար ստեղծել վստահելի հարթակ եւ իրականացվող ծրագրերին աջակցել հնարավորության եւ լիազորության սահմաններում», -ասել է Կարեն Սարգսյանը:

Հայաստանում ՉԺՀ արտակարգ եւ լիազոր դեսպանն էլ իր հերթին պատրաստակամություն է հայտնել՝ աջակցել ապակենտրոնացված համագործակցության ստեղծմանը:

«Չինաստանը Հայաստանի հետ ունի տնտեսության ամենատարբեր ոլորտներում ստեղծված համագործակցություն, եւ, հաշվի առնելով Գեղարքունիքի մարզի հնարավորություններն ու ներուժը, ցանկություն կա, որ նոր ձեւավորվելիք համագործակցությունը ծավալենք հատկապես գյուղատնտեսության եւ զբոսաշրջության ոլորտում», -ասել է Ֆան Յոնգը:

Այնուհետ ՉԺՀ դեսպանին եւ նրա ղեկավարած պատվիրակությանը Գեղարքունիքի մարզպետն ուղեկցել է Գավառի գյուղատնտեսական քոլեջ, որտեղ հյուրերը ծանոթացել են կաթի եւ կաթնամթերքի վերամշակման, ավտոտրանսպորտային, անատոմիայի եւ ֆիզիոլոգիայի լաբորատորիաների գործունեությանը:

Այցի հաջորդ կանգառը եղել է Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որտեղ հյուրերին ներկայացվել է տեղի դպրոցականների ուսումնասիրությունների արդյունքում պատրաստված պատմական ակնարկը՝ նվիրված Չինաստանի Հանրապետության պատմությանը եւ մշակույթին:

Ինչպես հավաստել է դեսպան Ֆան Յոնգը՝ իր իսկ աջակցությամբ այստեղ կկազմակերպվի չինարեն լեզվի ուսուցման գործընթացը, դպրոցին կտրամադրվի չինական գրականություն, իսկ լավագույն աշակերտները կխրախուսվեն:

Այցը եզրափակվել է Գավառի Արծվաքար թաղամասում գործող Միքայելյանների ընտանեկան՝ պանրի արտադրամասում, որտեղ հյուրերը ծանոթացել են տեղում արտադրվող պանրի տեսակների պատրաստման եղանակներին:

Ֆան Յոնգի հրավերով առաջիկայում մարզպետ Կարեն Սարգսյանը կայցելի Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատուն՝ համատեղ քննարկելու ապակենտրոնացված համագործակցության մեկնարկի հետ կապված առաջիկա անելիքները:

<https://www.24news.am/index.php/news/263525>

13.12.2022

Մեպտեմբերյան ագրեսիայից տուժած 459 ընտանիք 150.000-ից 362.000 դրամ աջակցություն է ստացել. Կարմիր խաչ

Դեկտեմբերի 12-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) պատվիրակության հետ համագործակցությամբ, տրամադրել է միանվագ դրամական աջակցություն 2022թ. սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների հետևանքով ծայրահեղ խոցելի իրավիճակում հայտնված Սյունիքի մարզի Ներքին Հանդ, Շիկահող, Սրաշեն և Ճակատեն, և

Գեղարքունիքի մարզի Կուտական, Տրետուք, Ներքին Շորժա և Սոթք համայնքների բնակիչներին: Ընդհանուր թվով 459 ընտանիք (1565 անձ) ստացել է 150.000-ից 362.000 ՀՀ դրամ ընտանիքի անդամների թվի հաշվարկով:

Համապատասխանաբար՝ մեկ անձից բաղկացած ընտանիքին տրամադրվել է 150.000 ՀՀ դրամ, երկու անձից բաղկացած ընտանիքին՝ 215.000 ՀՀ դրամ, երեք անձից բաղկացած ընտանիքին՝ 264.000 ՀՀ դրամ, չորս անձից բաղկացած ընտանիքին՝ 313.500 ՀՀ դրամ, իսկ հինգ և ավելի անդամից բաղկացած ընտանիքներին՝ 362.000 ՀՀ դրամ:

Այսպիսով, Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ընդհանուր առմամբ տրամադրել է 124.208.000 ՀՀ դրամի աջակցություն: Ծրագրին նախորդել է կարիքների գնահատումը, որն իրականացվել է ԿԽՄԿ-ի կողմից՝ տեղական իշխանությունների համակարգմամբ: Այնուհետև ԿԽՄԿ և ՀԿԽԸ թիմերը գրանցել են նշված համայնքներում շահառու ընտանիքներին:

Հարցերի և խնդիրների դեպքում կարող եք զանգահարել ՀԿԽԸ թեժ գիծ՝ 8184 հեռախոսահամարով:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), լինելով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման լիիրավ անդամ, առաջնորդվում է Շարժման հիմնարար սկզբունքներով՝ **Մարդասիրություն, Անկողմնակալություն, Զեզոքություն, Անկախություն, Կամավորություն, Եզակիություն, Համընդհանրություն:**

Հանդիսանալով կառավարությանն աջակցող կառույց՝ մարդասիրական ոլորտում, ՀԿԽԸ-ն արդեն 102 տարի է գործունեություն է ծավալում հանրապետության ամբողջ տարածքում հետևյալ ռազմավարական ուղղություններով՝ **աղետների կառավարում, բնակչության տեղաշարժ, սոցիալ – առողջապահություն, առաջին օգնություն, երիտասարդական, մարդասիրական արժեքների տարածում և այլն:**

ՀԿԽԸ առաքելությունն է նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

ԿԽՄԿ-ն չեզոք, անկողմնակալ և անկախ կազմակերպություն է, որի բացառապես մարդասիրական առաքելությունն է պաշտպանել զինված հակամարտությունից և բռնության այլ իրավիճակներից տուժած մարդկանց կյանքը և արժանապատվությունը: Կազմակերպությունն իրականացնում է իր մարդասիրական գործունեությունը տարածաշրջանում 1992 թ.-ից Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ:

<https://www.24news.am/index.php/news/263376>

08.12.2022

Զուլաքար համայնքի նախկին ղեկավար Արման Ղազարյանը՝ ՀՀ ԱԾ «Հայաստան» խմբակցության պատգամավոր

Գեղարքունիքի մարզի Զուլաքար համայնքի նախկին ղեկավար Արման Ղազարյանը ստացել է ՀՀ ԱԾ «Հայաստան» խմբակցության պատգամավորի մանդատը:

Հիշեցնենք, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ղեկտեմբերի 8-ին արտահերթ նիստի ժամանակ ընդունեց «Հայաստան» դաշինքի ցուցակում ընդգրկված Ռիմա Ղազարյանի, Ռուբեն Մելքոնյանի, Ռոբերտ Հայրապետյանի, Մարիա Պետրոսյանի, Մայաթ Շիրինյանի և Դավիթ Մահակյանցի՝ պատգամավորական մանդատներից հրաժարվելու դիմումը:

ԿԸՀ արձանագրությամբ մանդատները համապատասխանաբար տրամադրվեցին Մհեր Մահակյանին, Արփինե Վարդանյանին, Արման Ղազարյանին և Իրինա Գասպարյանին:

<https://yerkir.am/hy/article/2022/12/08/4180>

06.12.2022

Հայտնի է, թե ինչ ծրագրեր կիրականացվեն ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրվելիք 2.6 մլրդ եվրո գումարով

ԵՐԵՎԱՆ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2021 թ. հուլիսին հրապարակված և այնուհետև Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատարի կողմից Երևանում ներկայացված ԵՄ Տնտեսական և ներդրումային պլանի շրջանակում Եվրոպական միությունը հանձնառություն ստանձնեց տարբեր ֆինանսական գործիքներով (վարկ, դրամաշնորհ, երաշխիքներ, մասնավոր հատվածում ներդրումներ) մոբիլիզացնել 2.6 մլրդ եվրո՝ Հայաստանին 5 փոխհամաձայնեցված առաջնահերթ ուղղություններով աջակցելու նպատակով: **«Արմենայրես»**-ի փոխանցմամբ՝ տվյալ աջակցության մասին տեղեկատվությունը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում հրապարակել է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդական Մանե Ադամյանը:

Դրանք են՝

աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը. ուղղակի աջակցություն 30000 ՓՄՁ-ներին,

կապի և սոցիալ-տնտեսական զարգացման խթանում. Հյուսիս-հարավ միջանցքի կառուցման աշխատանքներում համագործակցություն,

ներդրումներ թվային վերափոխման, նորարարության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտում,

աջակցություն հարավային շրջանների դիմակայունության ամրապնդմանը,

ներդրումներ Երևանում. խելացի և կանաչ Երևան:

Այնուհետև, վարչապետի գլխավորությամբ և Կառավարության անդամների մասնակցությամբ կայացած պարբերական քննարկումների արդյունքում հայկական կողմը ձևավորեց ծրագրային փաթեթ՝ մատնանշելով յուրաքանչյուր ուղենիշի ներքո առաջնահերթ ծրագրերը: Հայկական կողմը առաջարկեց նաև 2 հավելյալ ուղենիշներ, որոնք են՝ աջակցություն կրթության հասանելիությանը և աջակցություն աղբի և ջրի կառավարմանը: 2021թ. սեպտեմբերին այս փաթեթը պաշտոնապես փոխանցվեց ԵՄ կողմին: Այնուհետև ձևավորվեցին աշխատանքային խմբեր՝ Կառավարության շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ յուրաքանչյուր ծրագրային առաջարկ ԵՄ կառույցների և Եվրոպական ֆինանսական ինստիտուտների հետ ավելի մանրամասն մշակելու և իրականացնելու նպատակով:

Փաթեթի ծավալները հաշվի առնելով՝ ԵՄ կողմի առաջարկով նախ առանձնացվեցին առաջնահերթ ծրագրեր՝ փաթեթի իրականացման մեկնարկի նպատակով, ուստի տարբեր ծրագրեր գտնվում են մշակման և իրականացման տարբեր փուլերում:

Մասնավորապես՝

Ուղենիշ 1

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը Հայաստանում գործող տարբեր առևտրային բանկերի հետ հաստատել է շուրջ 30 մլն եվրո արժողությամբ ծրագրեր ՓՄՁ մրցունակության բարձրացման նպատակով և 13 մլն եվրո արժողությամբ ծրագրեր կանանց ձեռներեցության խթանման նպատակով:

Միևնույն ժամանակ, ամփոփման փուլում է գտնվում Եվրոպական ներդրումային բանկի և Կենտրոնական բանկի Գերմանահայկական հիմնադրամի համագործակցությամբ մշակված ծրագիրը, որով ակնկալվում է շուրջ 70 մլն եվրո հատկացնել ՓՄՁ-ների կանաչացմանը և տեխնոլոգիական հագեցմանը, կանանց ձեռներեցությանը, տարածաշրջանային և ներառական զարգացում ապահովող բիզնեսներին:

Ուղենիշ 2

Ծավալուն աշխատանքներ են իրականացվել Հյուսիս-հարավ մայրուղու Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի (ներառյալ՝ Բարգուշատի թունելը) ծրագրի նախապատրաստման նպատակով: Մասնավորապես՝ իրականացվել են ծրագրի սոցիալական և բնապահպանական ազդեցության գնահատումները, ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության հիմնական մասը, ինչի արդյունքում ներկայացվել են մի շարք ռեկոմենդացիաներ: Շուրջ 900 մլն եվրո գնահատված ծրագիրն ակնկալվում է Եվրոպական կողմին ներկայացնել հաջորդ տարի՝ վարկ-դրամաշնորհի խառը գործիքակազմով ֆինանսավորման նպատակով:

Ուղենիշ 3

ԵՄ հետ մշակվել և հաստատման փուլում է գտնվում նոր բյուջետային աջակցության ծրագիր, որի շրջանակում տրամադրվող դրամաշնորհային միջոցներից Կառավարությունը նախատեսում է 15.3 մլն եվրո հատկացնել Արարատի, Կոտայքի և Գեղարքունիքի բոլոր դպրոցների բնագիտական ուղղություններով (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, ՏՀՏ) լաբորատորիաների վերակառուցման և վերազինման համար:

Ուղենիշ 4

Հաստատվել է «ԵՄ դիմակայունության գործիքը Հայաստանի համար» ֆինանսավորման համաձայնագիրը, որի շրջանակում 9 մլն եվրո դրամաշնորհային աջակցություն կտրամադրվի Սյունիքի մարզում գործող ՓՄՁ-ների աջակցության և Սյունիքում համայնքային փոքր ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Մշակվել և հաստատման փուլում է գտնվում ԵՄ նոր բյուջետային աջակցության ծրագիր, որի շրջանակում տրամադրվող դրամաշնորհային միջոցներից Կառավարությունը նախատեսում է 14 մլն եվրո հատկացնել Կապանի 13 կրթահամալիրների վերանորոգման, գույքով ապահովման և ուսուցիչների վերապատրաստման համար, կրթության կազմակերպման նպատակով ձեռք կբերվեն 8 միկրոավտոբուսներ:

Ամփոփման և հաստատման փուլում է գտնվում նաև Սյունիքում ոչ ֆորմալ նորարարական կրթության զարգացման նպատակով 20 մլն եվրո ընդհանուր արժողությամբ ծրագիրը (10 մլն եվրո դրամաշնորհ, 10 մլն եվրո վարկ), որով Սյունիքի մարզում կստեղծվեն 2 ԶՈԱՖ սմարթ-կենտրոններ:

Ուղենիշ 5

Հաստատվել է 25 մլն եվրո (5մլն եվրո՝ դրամաշնորհ, 20 մլն եվրո՝ վարկ) արժողությամբ «Երևանի ավտոբուսներ» ծրագիրը, որի շրջանակում ձեռք կբերվեն սեղմված բնական գազով աշխատող 87 ավտոբուսներ Երևանի համար. առաջին խմբաքանակը կլինի Երևանում 2023թ. սկզբին:

Ամփոփման և հաստատման փուլում է գտնվում Երևանում Էներգաարդյունավետության բարձրացման ծրագիրը՝ ընդհանուր 37 մլն եվրո արժողությամբ (10 մլն եվրո՝ դրամաշնորհ, 25 մլն եվրո՝ վարկ, 2 մլն եվրո համաֆինանսավորում), որով նախատեսվում է վերանորոգել Երևանի 29 մանկապարտեզ և 6 պոլիկլինիկա:

Գրառման մեջ նշվում է նաև, որ տնտեսական և ներդրումային պլանի ներքո մի շարք այլ ծրագրեր մշակման տարբեր փուլերում են: Սրանից զատ, Կառավարությունը շարունակում է համագործակցել Եվրոպական միության հետ առաջնահերթ այլ ուղղություններով: Մասնավորապես, հաստատվել են 10 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհային ֆինանսավորման համաձայնագիր՝ ուղղված ոստիկանության բարեփոխումներին, միգրացիայի կառավարմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև 5.2 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհային ֆինանսավորման համաձայնագիր՝ ուղղված Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի բարելավմանը:

<https://armenpress.am/arm/news/1098979.html>

05.12.2022

Գեղարքունիքի մարզի 3 բնակավայրերում կկառուցվեն առողջության առաջնային պահպանման կենտրոնների շենքեր

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար, Գավառ համայնքի Լճափ եւ Ճամբարակ համայնքի Դպրաբակ գյուղերում ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների հաշվին կկառուցվեն առողջության առաջնային պահպանման կենտրոնների նոր շենքեր:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչությունից, Ծակքարի եւ Լճափի Ա.Ա.ՊԿ-ները եւ Դպրաբակի բուժամբուլատորիան մինչ օրս չունեն համապատասխան շենքեր եւ գործունեություն են ծավալում այլ կազմակերպությունների հաշվեկշռում գտնվող շենքային տարածքներում: ՀՀ կառավարության կողմից ընդունված համապատասխան որոշման համաձայն՝ Ծակքար եւ Դպրաբակ բնակավայրերում ծրագրերը կյանքի կկոչվեն ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ մարզերում գործող առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների շենքերի կառուցման շրջանակներում, իսկ Լճափ բնակավայրում՝ «Հայաստան համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ»:

«Ծրագրի նպատակն է՝ գյուղական բնակավայրերում կառուցել ժամանակակից չափանիշներին համապատասխան գործող առողջության առաջնային պահպանման հաստատություններ: Ծակքարի եւ Լճափի առողջության առաջնային պահպանման կենտրոնները եւ Դպրաբակի բուժամբուլատորիան չունեն շենքային ժամանակակից ու բավարար պայմաններ, եւ կառավարության կողմից ընդունված որոշման շրջանակներում մոտակա երեք տարիների ընթացքում այս տեղերում կունենանք բոլորովին նոր, արդի չափորոշիչներին համապատասխան բուժհիմնարկների շենքեր»,-նշեց Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Վարդանյանը:

<https://168.am/2022/12/05/1806234.html>

Գեղարքունիքի մարզպետը մշտադիտարկում է անցկացրել Գավառ համայնքի շինհրապարակներում

Դեկտեմբերի 2-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Գավառ համայնքում համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի ուղեկցությամբ դիտարկել է ՀՀ Կառավարության կողմից 2021-22 թվականներին իրականացված կամ իրականացման փուլում գտնվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքը:

Այցի առաջին կանգառը Բուռնազյան փողոցում էր, որտեղ ավարտվել են ճանապարհի կապիտալ հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 220 միլիոն դրամ, որի 45 տոկոսը ներդրել է ՀՀ Կառավարությունը, 55 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Հիմնանորոգման աշխատանքները սկսվել եւ ավարտվել են 2021 թվականին: Ասֆալտապատվել է 1,1 կիլոմետր երկարության ներհամայնքային ճանապարհ՝ 8700 քառակուսի մետր մակերեսով: 5700 քառակուսի մետր մակերես էլ կազմում են ասֆալտապատ մայթերը: Բուռնազյան փողոցի վրա են գտնվում Գավառի թիվ 2 նորակառույց դպրոցի եւ թիվ 7 մանկապարտեզի շենքերը:

Կարեն Սարգսյանի երկրորդ կանգառը Գավառի թիվ 7 մանկապարտեզում էր, որտեղ հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում այս տարի հաստատված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 174 միլիոն 49 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ Կառավարությունը, 25 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրի մեկնարկը տրվել է այս տարվա հոկտեմբեր ամսին եւ կավարտվի 220 օրացուցային օրվա ընթացքում: Ծրագրի իրականացման արդյունքում գործող մանկապարտեզում կավելանա եւս 120 տեղ, որով եւ նախադպրոցական կրթությունն ստանալու հնարավորություն կունենան Գավառի Հացառատ թաղամասի բոլոր երեխաները:

Ապա մարզպետը Սարուխան գյուղում դիտարկեց թիվ 1 մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 60 միլիոն 572 հազար դրամ, որի 65 տոկոսը հատկացրել է ՀՀ Կառավարությունը, 35 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021 թվականի հունիսից եւ դեռեւս գտնվում են ընթացքի մեջ: Կարեն Սարգսյանն իր դժգոհությունն է արտահայտել շինարարության որակի շուրջ, արել է համապատասխան դիտողություններ եւ ցուցում տվել շինարարին՝ սեղմ ժամկետներում շտկելու նկատված թերությունները:

Այցի հերթական կանգառը Գավառի Արծվաքար թաղամասի թիվ 8 մանկապարտեզում էր, որտեղ ավարտվել է հաստատության մի հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 84 միլիոն 874 հազար դրամ, 65 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքներն այստեղ իրականացվել են 2020-2021 թվականների ընթացքում, ինչ արդյունքում գործող 3 խմբերի 60 սաների համար ապահովվել են լավագույն ու ժամանակակից պայմանները: Նախատեսվում է բացել չորրորդ խումբը, որի սաներն արդեն հերթագրվել են: Ծրագրի իրականացման շնորհիվ եւ Գավառի համայնքապետարանի միջոցների ներդրմամբ մանկապարտեզի շենքի հարմարավետ տարածք է տեղափոխվել Արծվաքար թաղամասի

գրադարանը, որը նախկինում գործում էր Արծվաքարի մշակույթի տանը, անբարվոք պայմաններում:

Կարեն Սարգսյանն իր գոհունակությունն է հայտնել շինարարության որակից, մանկապարտեզում ստեղծված աշխատանքային պայմաններից ու հազեցած առօրյայից:

Այցի վերջին կանգառը Գավառի մշակույթի տան շենքում էր, որտեղ ավարտին են մոտենում կապիտալ վերանորոգման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 109 միլիոն 944 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021 թվականի սեպտեմբերից եւ գտնվում են ավարտական փուլում: Ծրագրի իրականացման արդյունքում հիմնանորոգվել է դահլիճն ամբողջությամբ, կոնֆերանսների դահլիճը, աշխատասենյակներ, սանհանգույցները, ձեւափոխվել է շենքի երկու մուտքերի արտաքին տեսքը:

Այցի ավարտին Կարեն Սարգսյանը ներկայացրել է մշտադիտարկման արդյունքում ստացած տպավորությունները:

«Այսօրվա դիտարկումների հիմնական նպատակը մեկն էր՝ ստուգելու նախորդ մշտադիտարկումների ժամանակ տրված ցուցումների եւ հանձնարարականների կատարման ընթացքն ու արդյունքները: Որոշ տեղերում արդեն շտկված էին նկատված սխալներն ու թերացումները, որոշ տեղերում էլ հարկ եղավ նոր ցուցումների ու հանձնարարականների իջեցումը, որպեսզի բոլոր աշխատանքները հանձնվեն անթերի ու ենթակա լինեն վճարման: Ընդհանուր առմամբ, գոհ եմ աշխատանքների ընթացքից: Իսկ սուբվենցիոն, ինչպես նաեւ պետական միջոցներով իրականացվող մյուս ծրագրերի մշտադիտարկումները կրելու են շարունակական բնույթ, քանի որ դրանք առավել նպաստում են շինաշխատանքների արդյունավետ կատարմանը, ի հայտ եկած խնդիրների բացահայտմանն ու կարգավորմանը, նկատված թերացումների ու սխալների ուղղմանը», - ներկայացրեց Գեղարքունիքի մարզպետը:

<https://168.am/2022/12/05/1806254.html>

05.12.2022

Կառավարությունը 571 417,3 դրամ է հատկացրել Գեղարքունիքի մարզի սուբվենցիոն ծրագրերի համար

ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի հերթական նիստում որոշում է կայացվել 571 417,3 դրամ հատկացնել Գեղարքունիքի մարզի մի շարք բնակավայրերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի համար: Տեղեկացնում են Գեղարքունիքի մարզպետարանից:

225 020,0 դրամ հատկացվել է Սևան համայնքի Լճաշեն, Նորաշեն, Վարսեր, Գեղամավան, Չոլաբեր և Չկալովկա գյուղերի ճանապարհների նորոգման աշխատանքների համար:

24 088,5 դրամ՝ Մարտունի համայնքի Ծովինար, Չոլաքար, Վաղաշեն, Գեղիովիտ, Ն. Գետաշեն, Ծակքար և Ձորագյուղ բնակավայրերի փողոցներում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների համար /Ծակքար բնակավայր/

65 152,6 դրամ՝ Մարտունի համայնքի Չուլաքար, Աստղածոր, Վաղաշեն, Լիճք, Ձորագյուղ, Երանոս բնակավայրերում խմելու ջրագծերի համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքների համար /Լիճք բնակավայր/

9 036,8 դրամ՝ Մարտունի համայնքի կենտրոնի Վարդենիկ, Չուլաքար, Աստղածոր, Գեղհովիտ, Ն. Գետաշեն և Ձորագյուղ բնակավայրեր գազիֆիկացման աշխատանքների համար /Ներքին Գետաշեն բնակավայր/

248 119,4 դրամ՝ Մարտունի համայնքի Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Աստղածոր, Վաղաշեն, Ն. Գետաշեն Մաղինա, Ծակքար, Ձորագյուղ, Վարդածոր, Երանոս բնակավայրերում ոռոգման համակարգերի կառուցման և նորոգման աշխատանքների համար /Վարդածոր, Ծովինար, Ներքին Գետաշեն, Արծվանիստ բնակավայրեր/:

<https://www.24news.am/index.php/news/262326>

03.12.2022

Իսպանացի պատգամավորը Սոթքից միջազգային հանրությանը հորդորում է ստիպել Ադրբեջանի հեռանալ ՀՀ տարածքից

Իսպանիայի Կոնգրեսի պատգամավոր Ջոն Ինյարիտուն այցելել է Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայր, և տեսաուղերձով ցույց տալով Ադրբեջանի սեպտեմբերին կատարած վայրագությունների հետևանքները, կոչով դիմել միջազգային հանրությանը՝ ստիպել Ադրբեջանին հարգել խաղաղության օրակարգը, հեռանալ Հայաստանի այն տարածքներից, որոնք օկուպացրել է:



«Արմենայրես»-ի փոխանցմամբ՝ Ինյարիտուն տեսաուղերձը հրապարակել է «Թվիթեր»-ի իր էջում:

<https://www.24news.am/index.php/news/262095>

02.12.2022

ՀՀ Կառավարությունը 122 միլիոն 363 հազար դրամ է հատկացրել Գեղարքունիքի մարզի սուբվենցիոն ծրագրերի համար

ՀՀ Կառավարության՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում որոշում է կայացվել 122 միլիոն 363 հազար դրամ հատկացնել Գեղարքունիքի մարզի սուբվենցիոն ծրագրերի համար:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունից, 48 միլիոն 602 հազար դրամ հատկացվել է Մարտունի համայնքի Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Աստղածոր, Վաղաշեն, Ներքին Գետաշեն, Մաղինա, Ծակքար, Ձորագյուղ, Վարդածոր, Երանոս

բնակավայրերում ռոռզման համակարգերի կառուցման եւ նորոզման, 35 միլիոն 582 հազար դրամ՝ Վարդենիս համայնքի Խ. Ստեփանյան փողոցի ասֆալտապատման, միակողմանի մայթի կառուցման եւ կահավորման, 38 միլիոն 179 հազար դրամ՝ Վարդենիս համայնքի Վ. Համբարձումյան փողոցի միակողմանի եւ 170 մետր երկկողմ մայթի կառուցման համար:

<https://168.am/2022/12/02/1804959.html>

02.12.2022

Մառա Պետրոսյան

Տեղական տուրքերի բարձրացումը չի՞ վատթարացնի համայնքների բնակչության սոցիալական վիճակը

Կառավարության այսօրվա նիստում Ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը ներկայացրեց «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու [նախագիծը](#), որով առաջարկվում է՝

ա/ բարձրացնել շինարարության թույլտվության տրամադրման համար նախատեսված տեղական տուրքի դրույքաչափերը,

բ/ տեղական տուրք սահմանել շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար՝ առնվազն 100 հազար դրամի չափով:

Նշենք, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդվածում մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանված է մինչև 15 000 դրամ:

Այժմ առաջարկվում է տուն կառուցելու թույլտվության համար, չափերով պայմանավորված, տեղական տուրքը բարձրացնել 3,5-20 անգամ: Գործող օրենքը շինթույլտվության ժամկետը երկարացնելու համար տուրք չի սահմանել, հիմա առաջարկվում է յուրաքանչյուր երկարացման դեպքում 100 հազար դրամ տուրք սահմանել:

Նոյեմբերի 1-ից [նախագիծը](#) շրջանառության մեջ դրած Ֆինանսների նախարարությունն իբրև հիմնավորում ներկայացնում է, որ շինթույլտվության ժամկետները երկարաձգելու համար ընդգծված բարձր դրույքաչափ սահմանելը նպատակ ունի **«կանխել շինարարության ժամկետներն անընդհատ երկարաձգելու՝ կառուցապատողների ձգտումները»:**

«Նախագիծը մշակվել է այն նպատակադրմամբ, որպեսզի շինարարության թույլտվության ժամկետներն անընդհատ երկարաձգելու՝ կառուցապատողների վարքագծային դրսևորումները հնարավորին չափ սահմանափակելու միջոցով կանխվեն անավարտ շինությունների միջոցով համայնքների ճարտարապետական տեսքի խեղումները», - մեր հարցմանն ի պատասխան՝ հայտնում են Ֆինանսների նախարարությունից:

Նախարարին ուղղված գրությամբ խնդրել էինք հայտնել, թե ինչն է հիմք հանդիսացել սույն նախագիծը մշակելու համար: Ունե՞ն, արդյոք, ուսումնասիրություն կամ վիճակագրական տվյալներ, թե ինչքան անավարտ շինություն կա հանրապետությունում և միջինում քանի անգամ է երկարաձգվում շինարարությունն ավարտելու ժամկետը մայրաքաղաքում և գյուղական համայնքներում, ի՞նչ ժամկետներում:

Նախարարությունը խուսափել է հարցին ուղիղ պատասխանելուց: Հայտնել են, որ նախագծով առաջարկվող փոփոխությունները քննարկվել են մի քանի հարթակներում, այդ թվում՝ կառուցապատում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների հետ: Քննարկումների արդյունքում նախագծերով առաջակվող տեղական տուրքի դրույքաչափերում և առաջարկվող մյուս կարգավորումներում կատարվել են էական փոփոխություններ:

Մեր հաջորդ հարցին, թե նախագիծը կազմողները շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար առաջարկվող տուրքի դրույքաչափը սահմանելիս հաշվի առե՞լ են համայնքներում բնակվողների սոցիալական գործոնը:

«Նախագծերով սահմանվել է, որ շինթույլտվությունների տեղական տուրքերի մասով առաջարկվող կարգավորումները Երևան քաղաքից տարբերվող այլ համայնքներում կառուցվող անհատական բնակելի տների նկատմամբ կիրառելի չեն լինելու: Այդ առումով առաջարկվող կարգավորումները համայնքների բնակչության սոցիալական խնդիրների վատթարացման չեն կարող հանգեցնել», - ասվում է նախարարության պատասխանում:

Մինչդեռ, այսօր օրինագիծը Կառավարությանը ներկայացնելիս Ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը [հայտնեց](#), որ փոփոխությունները չեն կիրառվի սահմանամերձ համայնքներում: Նրան արձագանքելով՝ վարչապետն ավելի նեղացրեց շրջանակը՝ ոչ թե համայնքներին պետք է վերաբերի, այլ՝ բնակավայրերին:

Նախագծի հեղինակները «Հետք»-ին տված պատասխանով փաստում են, որ օրենսդրական փոփոխությունները կատարել են առանց վիճակագրական տվյալների ուսումնասիրության: Օրինակ, թե համայնքներում ինչքան շինթույլտվություն են տրամադրել վերջին 3 կամ 5 տարիներին, դրանցից քանիսին է շինարարական ավարտական ակտ տրամադրվել և շինթույլտվությունը երկարաձգելու քանի որոշում է կայացվել:

Չեն ուսումնասիրել համայնքային խնդիրները, մասնավորապես՝ բնակելի տուն չունեցողների քանակը, չամուսնացած երիտասարդների տարիքային շեմը և պատճառները, երբ չամուսնանալու հիմնական պատճառը տուն և աշխատանք չունենալն է: Բնականաբար, այս համադրելի վիճակագրական տվյալները, որոնք արտացոլվում են յուրաքանչյուր համայնքի հնգամյա ռազմավարական ծրագրում, կփաստեին, որ գյուղական բնակավայրերում սոցիալական արտոնություններ կիրառելու անհրաժեշտություն կա՝ առնվազն երիտասարդ ընտանիքների համար բնակարանաշինությունը խթանելու և ժողովրդագրական պատկերը փոխելու վրա ազդեցություն ունենալու համար:

Մինչդեռ, այս նախագծով մեկ անգամ ևս ընդգծվում է այն խտրական քաղաքականությունը, որ դրսևորվում է մայրաքաղաքում և մարզերում բնակվողների նկատմամբ: Երևան քաղաքում հիպոթեքով տուն գնելը և եկամտահարկի վերադարձը լուծում է բնակարանով ապահովելու հարցը: Գյուղական բնակավայրերում առանձնատուն կառուցելու համար հիպոթեք տրամադրող բանկերը վարկառուից պահանջում են գումարին համարժեք անշարժ գույք գրավադրել բանկում՝ նախապատվությունը տալով Երևան քաղաքում գտնվող գույքին: Այսպիսի անհավասար

պայմաններ ստեղծելով՝ իրախուսվում է նաև մարզերից բնակչության հոսքը մայրաքաղաք, քանի որ այստեղ այդ հարցի լուծումը համեմատաբար հեշտ է, որոշ դեպքերում միայն աշխատանք ունենալը բավարար է: Մինչդեռ, տարածքային համաչափությունն իրականություն դարձնելու համար ավելի մեծ արտոնություններ պետք է կիրառվեին մարզերի համար, և ոչ միայն՝ սահմանամերձ բնակավայրերի:

Մայրաքաղաքում բազմաբնակարան շենքերի համար կիրառելի այս օրենսդրությունը, սոցիալական արդարության տեսանկյունից, չի կարող կիրառելի լինել հատկապես գյուղական բնակավայրերի համար: Ազգային ժողովում գոնե սթափ մոտեցումով քննարկման առարկա պետք է դարձնեն այս հարցերը: